

ՆՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄՈՒՏՔԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Սովորաբար գնահատում են
 փառքերությունների համար,
 եւ ոչ թե նմանությունների»:
 Նր. Մաթևոսյան

Նր. Մաթևոսյանի սրբեղծագործությանն անդրադառնալիս անպայման խոսվում է նրա ծննդավայր Ահնիձոր գյուղի մասին: Դա զարմանալի կարող է թվալ, եթե հաշվի առնենք, որ գրողն այդ գյուղում ապրել է իր կյանքի միայն առաջին տասնվեց տարիները՝ մանկությունն ու պատանեկությունը: Ի՞նչ դեր է կատարել Ահնիձորը Մաթևոսյանի սրբեղծագործության մեջ, որ «արժանանում» է այդքան մեծ ուշադրության:

Այս հարցին կարող է պատասխանել յուրաքանչյուրը, ով ծանոթ է Նր. Մաթևոսյանի սրբեղծագործությանը. ամբողջ կյանքում հեռու ապրելով իրական Ահնիձորից՝ երբեք չհեռացավ գրական Ահնիձորից՝ Ծմակույրից, նրա ոչ մի սրբեղծագործության ոչ մի դրվագ չծավալվեց Ահնիձոր-Ծմակույրից դուրս (բացառությամբ «Խումհարը» վիպակի, որի թեման դարձյալ Ծմակույրն է):

Սակայն Մաթևոսյանը լավ գիտեր, որ գրականությունն իրականության պարզ վերապատմումը կամ լուսանկարումը չէ: Մաթևոսյանական դիպրակումներում կյանքի ու գրականության միջև կանգնած է գրողը: 1966 թ. փրկագրված իր առաջին՝ «Մալիպակ թղթի առջև» հոդվածում նա գրում է. «Գրողն ի՞նչ է անում. աշխարհն իր ուզածի պես չէ, ուզում է աշխարհը բերել իր ուզածի փեսին»¹:

Այս առումով հեղափոխիչ է Մաթևոսյանի խոսքովանությունը՝ արված Նովիկ Վարդումյանի հեղափոխության մեկում իր՝ «Նովսեփը վերադարձավ բանակից» առաջին պատմվածքի մասին: Ինչպես նրա բոլոր սրբեղծագործությունները, այս պատմվածքը էս իրական հիմք ունի: Գրողի հորեղբայրը Նայրենական պատերազմում զոհվել էր: Նրա կինը երկար սպասել էր ամուսնուն, իսկ երբ իրենց միակ երեխան մահացել էր, հեռացել էր գյուղից: Բայց պատմվածքն այլ ավարտ ունի. հորեղբայրը՝ գրական Նովսեփը, վերադառնում է բանակից: «...Մերթվ համաձայն չէի, որ նա սպանված լիներ... Այդ վերադարձն իմ վերադարձն էր... Նրա վերադարձով իմ վերադարձն էի փեսնում...»²:

Իրականության ու գրականության սահմանները հստակ գիտակցող արձակագիրը դժգոհում էր, որ հայ գրողներն իրականությունն առանց թելերի են բերում գրականություն: Ինքը, թեև փառվ իրական Ահնիձորին, այն դարձրեց գրական Ծմակույր: «Երբ ես եկա, Ահնիձորը կար, Ծմակույրը չկար: Ծմակույրը իրական Ահնիձորի եւ այդ Ահնիձորի հանդեպ իմ սիրտ միությունն է... Ծմակույրը իմ սերն է, իմ վերաբերմունքը, իմ փազնապը մարդու համար: ԾՄԱԿՈՒՏԸ ԵՄ ԵՄ»³:

1 Նր. Մաթևոսյան, Մալիպակ թղթի առջև, «Գրական թերթ», Եր., 1966:

2 Ն. Վարդումյան, Զրույցներ Նրանի Մաթևոսյանի հետ, Եր., 2003, էջ 22-23:

3 «Ար», 01.03.1995:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ Կարաժքային նման սահմանափակությունը սահմանափակում է արվեստի և գրականության արժեքն ու ներքին փիլիսոփայական ընդգրկումները: Այս կանխակալ և մասնավորապես Տ. Մաթևոսյանի դեպքում սխալ կարծիքի կողմնակից բնագավառներ շատ են եղել ժամանակին՝ նրան որակելով որպես գյուղագիր, սահմանափակ մրաժողության կրող-արտահայտող, քաղաքակրթությունը մերժող, դեպի անցյալ, դեպի «անձավները»⁴ վերադառնալու կոչ անող:

Տ. Մաթևոսյանի սրբազանությունը նվիրված գրեթե բոլոր ուսումնասիրությունները, որպես նախաբան, սկսում են ողջ Խորհրդային Միության Կարաժքում ձևավորված և «գյուղագրություն» անվանված արձակի բնորոշ գծերի վերլուծությունից:

Գյուղագրական արձակը 1960-ական թթ. համարվում էր նոր երևույթ խորհրդային գրականության մեջ՝ նախորդ շրջանների և՛ դասական, և՛ մերօրյա գյուղագրության հետ ամփոփական առնչություններով: Գյուղագիրներ Բելովը, Բիպովը, Շուկշինը, Ռասպուտինը, Այրամարովը, Աբրահամովը, Դրուցեն, Մաթևոսյանը ժամանակին ամենավերլուծվող ու քննվող գրողներն էին:

Գյուղագրական արձակի հարցերին նվիրված առաջին բանավեճն ընթացավ «Լիպերապուրնայա գագեպա» թերթում 1967-1968 թթ.: Շենց սկզբից դրսևորվեցին բոլոր Կարաժքայինները, իրարամերժ կարծիքների հիմնական ուղղվածությունները: Զուր բովանդակային, թեմատիկ վերլուծություն կարարելով՝ շարերը լիովին մերժում էին արձակի այդ արեսակը, ռմանք էլ այն համարում էին յուրահայտ ու թարմ նորություն գրականության մեջ: Ռուս բնագավառի Յու. Գալկինը փորձում է հոգեբանորեն բացատրել գյուղագիրների միտումը՝ անցյալի, գյուղի մասին գրելը. «Գրողը, որի մանկությունն անցել է գյուղում, ինքնաբերաբար աշխատում է իր պարկերացման մեջ «պահածոյացներ» անձնապես իրեն հոգեհարազատ կյանքն այնպիսի ձևերի մեջ, ինչպես այն ընկալել է մանկական տարիքում»⁵:

Ուրբանիզացիան ուղեկցվում էր ոչ միայն ձեռքբերումներով: Կորստյան իրական վրանգ էր սպառնում հարյուրամյակների բովում թրծված, պարմության բառադիներում իրենց լինելության անհրաժեշտությունը հաստատած հոգևոր շատ արժեքների, որոնք անմիջականորեն կապված էին գյուղաշխարհի հետ:

Շարերը կարծում էին, թե գրականություն մտնելու ամենահեշտ ձևը գյուղագրությունն էր՝ նշելով այն փաստը, որ գյուղագրության համար կային հարուստ ավանդույթներ, անցյալի գրողների օրինակելի փորձ: Անուրանալի է ավանդույթների դերն ու նշանակությունը գրականության զարգացման գործում, սակայն միայն ավանդույթներով գրականություն չի սրբազանվում: 1968 թ. «Գրական թերթում» տպագրված «Այսպես կոչված գյուղագրության մասին» հոդվածում Տ. Մաթևոսյանը, գրական ավանդույթների մասին խոսելով, հարցը դիպմամբ սրում էր ծայրահեղացում է. «Բակունցը չի օգնում ոչ մի գրողի, իսկ եթե օգնում է որևէ գյուղագրի, կարող է օգնել նաև քաղաքագիրներին, որովհետև ոչ գյուղն ու քաղաքն են սոցիալական հակադիր բևեռներ, ոչ գյուղացին ու քաղաքացին են մարդկայնորեն հակադիր որակներ»⁶:

4 Տե՛ս Մ. Թ. Թ. Թ., Վերադարձ դեպի անձավները, «Գրական թերթ», 1969, 23 մայիս:

5 Յու. Գալկին, Գյուղ գրական և իրական, "Вопросы литературы", Մոսկվա, 1973, թ. 3:

6 Տ. Մաթևոսյան, Այսպես կոչված գյուղագրության մասին, «Գրական թերթ», 1968, սեպտեմբեր 13:

Նայ քննադատության մեջ «գյուղագրություն-քաղաքագրություն» բանավեճը ծավալվեց 1968 թ., «Ինչպե՞ս սրանալ միջին ազգային կերպար» հոդվածով Միջին ազգային կերպարի որոնումներում Վ. Պեքրոսյանը գրում է. «Ես ինչպե՞ս իրար գումարեմ ֆիզիկոս Ալիխանյանին, լեռնագործ Աշոտ Մելքոնյանին, մեր գյուղացի Աթանես պապին, երաժիշտ Առնո Բաբաջանյանին, օդաչու Էդիկ Բախչինյանին, գրող Պերճ Զեյթունցյանին, գրող Նրանուր Մաթևոսյանին: Ես ինչպե՞ս գումարեմ, ինչի՞ վրա բաժանեմ, որ քանոթդում սրացվի այսօրվա հայի միջին ազգային կերպար»⁷, գրում է Վ. Պեքրոսյանը:

Այս հոդվածին Նր. Մաթևոսյանն արձագանքում է 1968 թ. գրված հոդվածով: Նա Վ. Պեքրոսյանին՝ միջին ազգային կերպար սրանալու ցանկությունը ոչ ճիշտ է և մտադրված է համարում: Ըստ Մաթևոսյանի՝ յուրաքանչյուր հայի մեջ կարելի է գտնել այն, ինչ կա բոլոր հայերի մեջ. ֆիզիկոս Ալիխանյանի մեջ կան մյուսները⁸:

Պարասխան հոդվածում Վ. Պեքրոսյանը բացատրում է, որ իրականում. «Ես ոչ թե մտադրված էի միջին ազգային կերպար սրելով՝ զաղափարով, այլ անհնարին էի համարում այն»⁹: Նշում է նաև, որ դեմ էի արտահայտվել գյուղագրությանը, այլ գրականության մեջ տեղ է պահանջում նաև քաղաքագրության համար: Մաթևոսյանական այն պնդմանը, թե՛ մեկի մեջ կան բոլորը, Վ. Պեքրոսյանն ընդդիմանում է: Այդ դեպքում. «Նրանուր Մաթևոսյանն ինչո՞ւ էի փորձում մի անգամ էլ Աթանես պապին բացահայտել ֆիզիկոս Ալիխանյանի միջոցով»¹⁰: Այս հարցադրումը որքան ճիշտ, նույնքան սխալ է: Յուրաքանչյուր գրող պարկերում-գրում է իրենը. Մաթևոսյանին Աթանես պապն էր, նա աշխարհը բացահայտում էր Աթանես պապով:

Մաթևոսյանի այն մտքին, թե՛ «Մինչև մեր խելքները, ոչ ոքի մտքով չի անցել գրականությունը բաժանել երկու տարբեր թևերի...», Վ. Պեքրոսյանն իրավացիորեն նկատում է, որ «գյուղագրություն» տերմինի հեղինակն ինքը չէ, այդ մասին գրել էր դեռ Արսեն Տերտրյանը: Եւ, առհասարակ, բացի «մեր խելքներից» «գյուղագրություն-քաղաքագրություն» բաժանումը կարարել էին ռուս քննադատները:

Վերոնշյալ հոդվածից բացի Վ. Պեքրոսյանը մեկ այլ հոդված տպագրեց «Գարուն» ամսագրում՝ «Նավասարում՝ բազմաթիվ անհայտներով» վերնագրով, որտեղ խոսում է արդիականության և ավանդույթի մասին: Նա ազգային մի քանի ավանդույթներ է նշում՝ սուգ պահելը, հոգեհաց տալը՝ ցույց տալու համար դրանց մի շարք ծայրահեղ դրսևորումների հեղափոխությունը: Հոդվածի շարունակության մեջ կարդում ենք. «...Բայց բավական է, որ գրողը նկարագրի գյուղի մանիշակագույն իրիկնապահը, հողագործ պապի ճաքճված ձեռքերը, աղբյուրի մոտ բարդիների պես շարված ջահել հարսներին, և անմիջապես նա ազգային կեռակովի»¹¹:

Ակներել է գրողի դժգոհության պարզադր. իր գրականությունը նույն ջերմությամբ և համընդհանուր ուշադրությամբ չի ընդունվում, ինչպես Մաթևոսյանին: Պարզադր փոր-

7 Վ. Պեքրոսյան, Ինչպե՞ս սրանալ միջին ազգային կերպար, «Սովետական Նայասարան», Եր., 1966, թ. 287:

8 Տե՛ս Նր. Մաթևոսյան, Այսպես կոչված գյուղագրության մասին:

9 Վ. Պեքրոսյան, Այսպես կոչված գյուղագրության մասին, «Գրական թերթ», 1968, տպարկեր 13:

10 Անդ:

11 Վ. Պեքրոսյան, Նավասարում՝ բազմաթիվ անհայտներով, «Գարուն», Եր., 1968, թ. էջ 3:

ձում է գտնվել իր և Մաթևոսյանի սրբազանությունների փառքերությունների մեջ: Մաթևոսյանի հաջողության գաղափարը «քաղաքագիրը» համարում է «գյուղագիր», ավանդներ շարունակող լինելը. «Հրանտը ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ է (ընդգծումը՝ Վ. Պ.), որովհետև մենք ունենք գյուղագրության դասական ավանդներ (Թումանյան, Պոռչյան, Բակունց, Համաս-յան)»¹²:

Վ. Պետրոսյանը ցանկություն է հայտնում րենսել այնպեղ նոր ժամանակների բերած փոփոխությունները գյուղական կյանքում: «Մեր օրերում լույս րենսող որոշ գործեր բակունցյան, անգամ պոռչյանական գյուղի պարկերներն են վերակենդանացում»¹³: Այդպիսի գործեր գուցե կան, եղել են, սակայն Հր. Մաթևոսյանի գործերում ամենաակնհայտ կարեգործիան ժամանակն է: Եւ, ի վերջո, ի՞նչ էր պարկերում Մաթևոսյանը, եթե ոչ Վ. Պետրոսյանի պահանջած նոր ժամանակների ազդեցությունը հայ ավանդական գյուղական կյանքի վրա:

Անվիճելի է, որ ոչ թե ընտրած միջավայրն էր Վ. Պետրոսյան և Հր. Մաթևոսյան գրողների ոչ հավասար գնահատման պարծառը, այլ մարդկային հոգին թափանցելու և գրականության մեջ արարածելու կարողության, րադանդների փառքերությունները:

«...Եղել է և կա միայն ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՈՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ընդգծումը՝ Վ. Պ.),- իրավացիորեն նշում է Վ. Պետրոսյանը և ավելացնում.- բայց մեր արձակի փաստական վիճակն առայժմ հիմքեր է րալիս այդ («գյուղագրություն-քաղաքագրություն»- Շ. Կ.) բաժանման համար»¹⁴:

«Չկա գյուղագրություն կամ քաղաքագրություն. կա միայն մարդկային հայացք բնությանն ու աշխարհին»¹⁵, - ձևակերպում է Հր. Մաթևոսյանը:

Այն փաստը, որ իր կենսափիլիսոփայության ողջ բարդ համակարգը Մաթևոսյանն արարահայրեց-ներկայացրեց փոքրիկ գյուղի սահմաններում, նրա բնակիչների միջև փոխհարաբերությունների, ներքին հոգեբանական պայքարների, մտորումների միջոցով, բացարկում է գրողի դիրքորոշումը, իսկ նրա դիրքորոշումը պարզ է. մասնավորի մեջ է ընդհանուրը, մեկի մեջ են բոլորը: Ծնակուր պարկերավոր անվանումով մի փոքրիկ գյուղով հեղինակը բարձրացրել է այնպիսի հարցեր, որոնք հավասարապես վերաբերում են բոլորին՝ անկախ ազգային ու րարածքային պարկանությունից:

Ծնակուրը մեծ աշխարհի մոդելն է: «Համոզված եմ, որ աշխարհի ամենացավոր հարցերին հնարավոր է պարասխանել առանց Ծնակուրից դուրս գալու, բառացիորեն՝ չհեռանալով Ծնակուրից: Վստահ եմ՝ յուրաքանչյուր Ծնակուր իրենով ներկայացնում է աշխարհի ամբողջ բարդությունը»¹⁶:

Միևուրաշխարհ սրեղծելու միտքը Մաթևոսյանի հնարանքը չէր: Իրական աշխարհը, մարդկային բարդ փոխհարաբերությունները փոքրիկ աշխարհի սահմաններում ներկայացնել փորձել են համաշխարհային գրականության լավագույն գրողներից մի քանիսը: Գաբրիել Գարսիա Մարկեսի Մակոնդոն, Նոբելյան մրցանակակիր Ֆոլքների Յոկնապա-

12 Անդ:

13 Անդ:

14 Անդ:

15 Հր. Մաթևոսյան, Այսպես կոչված գյուղագրության մասին:

16 «Լեզվի պոեզիան», «Вопросы литературы», Մոսկվա, 1980, դեկտեմբեր:

ստիճան, Մաթեոսյանի ծանկուտը սրելով՝ ասելով՝ «Տա Աստված, որ աշխարհի քարտեզի վրա մի բնակավայր էլ ես ավելացնեմ... Ծանկուտը առայժմ իմ հայրենի գյուղն է, ես այդ գյուղի արձակագիրն եմ... Իրական այդ գյուղը կվերածի՞ գրական ծանկուտի, կկարողանա՞մ վերածեցնել՝ չգիտեմ»¹⁷:

1960-ական թվականներ. Խորհրդային Միության իշխանության փառքներ. կոմունիստական կուսակցության գաղափարական ճնշումը կյանքի ու մարմնի բոլոր ոլորտների վրա է:

1961 թվական. գարուն. ապրիլ: Ամբողջ աշխարհը տնտեսում է Խորհրդային Միության գիտական մարմնի ու փնիսիկայի հաղթանակը՝ փնեզերքի նվաճումը:

Նույն՝ 1961 թվականին, նույն՝ ապրիլ ամսին, նույն՝ Խորհրդային Միության փառքներում գրավող հայկական անհայտ, փոքրիկ գյուղի իրական կյանքը նկարագրող ակնարկ է տպագրվում «Մովեդական Գրականություն» ամսագրում: Նույնիսկ՝ Նրանք Մաթեոսյան, ակնարկը՝ «Անիծոր»¹⁸:

Թվում է՝ մեծ փնեզերքի նվաճման ուրախության հերետիքով մաթեոսյանական գրական փնեզերքն աննկատ կմնար: Մակայն խորհրդային կարգերի բերած փոփոխությունների հանդեպ անթաքույց հեզմանքն ու բողոք-դժգոհությունը, որն ակնարկի յուրաքանչյուր տողում առկա է, չէր կարող վրիպել իշխանությունների ուշադրությունից...

Խորհրդային փառքներին կոմունիստական կուսակցության գաղափարական ճնշումը կյանքի ու մարմնի բոլոր ոլորտների վրա էր: Այդ շրջանում գրականությունն ուներ մեկ առաքելություն՝ տարածել ու ամրապնդել կոմկուսի գաղափարախոսությունը: Նովանավորվում էին միայն այն գրողները, ովքեր սոցիալիստական հասարակարգը ներկայացնում էին որպես անթերի իրականություն, որտեղ չկար վատ ու բացասական ոչինչ, իսկ հասարակական աշխատանքը համարարվում էր ուրախություն էր: Գրողներից պահանջվում էր կերպով այնպիսի հերոս-իդեալներ, որոնք պետության, հասարակության շահերը բարձր են դասում ամեն ինչից՝ իրենց անձից, ընտանիքից:

Այսպես ձևավորվում էր կեղծ գրականություն, որտեղ չկար իրական կյանքը, չկային

17 «Գրքերի աշխարհ», 1979, թ. 5:

18 Նրանք Մաթեոսյանի առաջին տպագրի սրելոգործությունների ժամանակագրական ճշգրտում կատարել է բանասիրական գիտությունների դոկտ., պրոֆ. Վազգեն Գաբրիելյանը 2006 թ. տպագրված, արձակագրի յոթանասուն ամյակին նվիրված «Մաթեոսյանական ընթերցումներ» հոդվածների ժողովածուի մեջ: Ե՛ւ «Նայկական սովետական հանրագիտարանում, ե՛ւ՝ «Նայկական համառոտ հանրագիտարանում» որպես Նր. Մաթեոսյանի գրական առաջին տպագրի սրելոգործություն նշվում է «Անիծոր» ակնարկը: Այս անճշտության պատճառն այն է, որ արձակագրին բոլորը ճանաչեցին սույն ակնարկով, այնինչ նախքան այն 1961 թ. «Մովեդական գրականություն» ամսագրի չորրորդ համարում տպագրելը, Մաթեոսյանը մամուլում տպագրած մի քանի գործեր արդեն ուներ. 1959 թ. «Մովեդական գրականություն» ամսագրում՝ «Տափաստարանում» ընդարձակ ակնարկը, 1960 թ.՝ նույն ամսագրում՝ «Բնություն» պատմվածքը (որը քննադատության մեջ սխալմամբ «Բնություն» վերնագրով է հիշատակվում) եւ 1961 թ.՝ «Ի՛նչ կուզենար անել Վոլոդյա Մաթեոսյանը» ակնարկը:

Նր. Մաթեոսյանի առաջին գործերի մանրամասն ուսումնասիրությունն ունի մեծ նշանակություն: «Գրողի սկզբի մեջ արդեն կար նրա հերագա ողջ շարունակությունը», գրում է Վազգեն Գաբրիելյանը վերոնշյալ հոդվածում: Դա գիտակցում էր նաև ինքը՝ Մաթեոսյանը. ««Անիծոր» ակնարկը գրել եմ 60 թ., «Տերը» կինովիպակը՝ 80-ին: Երկուսն էլ նույն բանն են ասում: Կարծում եմ՝ դեռ ուսանող՝ ասելիքս գրած եմ եղել, եւ նյութն այս քանի տարում չի փոխվել, գնալով բացահայտվել ու մեծացել է» (Նր. Մաթեոսյան, «Ես եւ եմ», Եր., 2006, էջ 23):

իրական մարդիկ: Թույլատրվում-հրամցվում էր լոկ այն, ինչ բարձրացնում էր իշխանությունների հեղինակությունը մարդկանց աչքում: Արվում էր ամենը, որ մարդիկ հավատան՝ Խորհրդային Միությունը անթերի իրականություն է: Տեղեկարարական շրջափակումը եւս այդ նպարակին էր ծառայում. որքան քիչ բան գիտի մարդը, այնքան հեշտ է նրան կառավարելը: Սա էր Խորհրդային իշխանության վարած քաղաքականությունը:

Այս քաղաքականության վնասները հասան նաև գյուղ, փոխեցին կենսակերպի՝ դարերով հաստատված ձևերը: Սեփական հողի պարզևած բազում ու անսպառ բարիքներից կարելի էր օգտվել միայն իշխանությունների թույլտվությամբ՝ կենսական ամենաանհրաժեշտ կարիքների չափով միայն, որպեսզի մրահորիզոնը լայնացնող, միտքը զարգացնող որևէ այլ բանով զբաղվելու ոչ ժամանակ, ոչ հնարավորություն, եւ ոչ ցանկություն մնար:

Փաստորեն սոցիալիստական կարգերը հաստատվել էին մարդու եւ բնության, գյուղի եւ գյուղականության, արվեստագետի եւ արվեստի, մարդու եւ մարդու միջև:

Սա էր ակնարկի ասելիքը՝ պարզ, դիպուկ եւ ճիշտ: Պարսեական չէր նաև գրական ժանրի ընտրությունը՝ ակնարկ, որը վավերագրական գրականության տեսակ է: Վավերագրական ճշգրտություն ունեցող պատկերներով Մաթեոսյանը պարմում է իր հայրենի Անի-ձոր գյուղում տեղի ունեցած իրական մի քանի դեպքեր, որոնք վկայությունն են գյուղացի մարդու կյանքում նոր՝ սոցիալիստական կարգերի թողած բացասական ազդեցության:

Դարեր շարունակ Բնությունն ու Մարդը չմիջնորդավորված, անմիջական կապով են կապված եղել. Մարդը մշակում էր բնությունը, Բնությունը մշակում էր Մարդուն: Անուրառ, արջը, լուսինը, ձին, գևըրը գյուղացուն էին, Մարդունը: «Մենք ենք, մեր արջը, մենք ենք, մեր սարերը, երբորդը գործ չունի էսրեդ», - ասում է Մաթեոսյանը:

Սակայն այդ երբորդն է այժմ բնության տերը. նա՛ է հրամայում կամ արգելում սպանել արջին, նա՛ է որոշում ու կտրում անուրառը, նա՛ է սահմանում, թե քանի գյուղի ընտանի կենդանի է քանի մեկը հաղապարածք կարող է ունենալ գյուղացին:

Այսօրինակ միջամտությունները զարմանք էին հարուցում բոլորի մեջ: Նշենք Զորի Բալայանի հոդվածը՝ տպագրված 1982 թ. «Գարուն» ամսագրում: Գրողին պարմել էին, որ մի քանի տնտեսություններում ծխախոտի բերքի գրեթե կեսը մնում է ձյան տակ: Տեսնելով այդ՝ գրողը զարմանում է. «Աչքերիս չկարողացա հավատալ: Մտածեցի, որ վաղը ոչ այնքան փաստն է, որ ծխախոտը մնացել է ձյան տակ, այլ այն, որ մարդիկ դա իմացել են նախապես, դեռ ցանելիս, իմացել են, որ հիսուն հեկտարից տասնհինգը մնալու է ձյան տակ: Իմացել են եւ ցանել են:

Ինձ բացառեցին. շարունակում է արձակագիրը,- վերելից պլան են իջեցնում, ուզած-չուզած պեղք է կտրաբես... Ամեն տարի: Միշտ: Չի հաստատանում: Չեն հասցնում: Եւ, այնուամենայնիվ, պլանավորում են»¹⁹:

Նմանաբան իրավիճակներ են նկարագրվում «Անի-ձոր» ակնարկում. իշխանությունների հրամանով կտրվում է ճրագթաթ անուրառը, որը վառելափայտի միակ աղբյուր լինելուց բացի անի-ձորցիների հպարտության առարկան էր: «Ճրագթաթ ծմակը փայտ է եղել, հասկանում էք: Իսկ ես կարծում էի վայրի գեղեցկության խորհրդանիշն է եղել այդ

19 «Գարուն», 1982, թ. 8, էջ 54:

բարդված անտառ... ճրագթաթը նկարից դարձավ միլիարդ»²⁰: Սովխագի փնտրելի հրամանով Իգնատը գրկվում է ձիուց, քանի որ գյուղացուն ձի ամենևին էլ պետք չէ: Կենտրոնից նախ արգելում են սպանել արջին, ապա, երբ կենդանին վնասում է կոլտնտեսությանը, հրամայում են անմիջապես սպանել: Արգելում են սարվորի ու հնձվորի միջև բնամթերային ապրանքավաճառականությունը (սարվորը հնձվորին կաթնամթերք էր փալիս, հնձվորը սարվորին՝ բանջարեղեն):

Մաթեոսյանի իշխանություններին ուղղված բողոքը «Անիծոր» ակնարկի «Բաց նամակ» գլխում է. թո՛ւյլ քվեք գյուղացուն մշակել իր հողը, վերցնել հողից այնքան, որքան պետք է իրեն: Եթե չեք օգնում, գոնե մի՛ խանգարեք գյուղացուն ապրել իր փանջալից-քաղցր-սովորական կյանքով:

«Բաց նամակով» անիծորցիները դիմում են սովխագի փնտրելի ընկեր Եղիկյանին, նույնն է թե՛ Մաթեոսյանը դիմում է ՆԿԿ կենտրոնին. «Թույլ փաթ, որ մարդիկ ձի ունենան, աշխատանքի ձեռք գնան-գան, քանի որ Վուգա կամ Կրամվայ չունենք: Եթե ձիուց, որպես կապիտալիզմ ծնողից, շատ էր վախենում, անցկացրեք ուրեմն փրամվայի գծեր՝ գյուղից դեպի բոլոր հանդերը»²¹:

Մաթեոսյանը բացասական վերաբերմունք է արտահայտում հայ ժողովրդի, հայ գյուղացու կյանքում խորհրդային կարգերի բերած փոփոխությունների հանդեպ: Նա դեմ է ժողովրդի կյանքին խառնվելուն, կենսակերպի՝ դարերով հաստատված ձևերը փոխելուն, հայ գյուղը հայկականությունից, գյուղականությունից զրկելուն: «Իսկ հողը նույն կենսագրությունն ունի, ինչ հայոց՝ հազար անգամ մոխրացած, հազար մեկ անգամ կանաչած հողը, այսօր մարդ ապրել է, այս ձորը եղել է մի բերրի հովիտ, մարդաշատ, ինչպես հայ հողի ցանկացած պարտիկը»²²:

«Անիծոր» ակնարկը ո՛չ քաղաքակրթության մերժում էր, ոչ էլ գյուղական կյանքի հովվերգական նկարագրություն-փառաբանում: Ծանր է գյուղացու առօրյան: Մաթեոսյանը երագում էր նրա կյանքում դրական միջամտության, գործը թեթևացնելու նպատակով գիպության և փոխնակայի ձեռքբերումների մասին: «Սպասենք աշխատանքը քիչ թեթևանա, հունձը էլի մի մասով ընկնի մեքենայի վրա... Դա հո՞ կլինի. դրա վրա ինչ-որ փող հո՞ աշխատում են մարդիկ, որոնք ունեն ե՛ր լավ սիրտ, ե՛ր գիպություն»²³:

Մաթեոսյանին քննադատողները, ինչպես ասացինք, շատ հաճախ նրան մեղադրում էին քաղաքակրթությունը մերժելու մեջ: Սակայն, ինչպես հեշտ է նկատել, որ նա ոչ միայն դեմ չէր, այլ նույնիսկ երագում էր գյուղացուն ճիշտ օգնելու, առօրյա հոգսերը թեթևացնելու համար քաղաքակրթության ձեռքբերումների մասին: Միայն այդ դեպքում մարդիկ ժամանակ կունենան հոգսերից զատ այլ բաների մասին մտածելու: Շուտով կլսեն, ասում էր Մաթեոսյանը, կիմանան, որ Թումանյանը «Գիքորից» բացի այլ գործեր էլ ունի:

Ակնարկի փալագրությունից անմիջապես հետո Մաթեոսյանը հայտնվում է գրական-քննադատական և հասարակական-քաղաքական շրջանակների ուշադրության կենտրո-

20 Տր. Մաթեոսյան, Երկեր, հատոր 1, Եր., 1985, էջ 19:

21 Անդ, էջ 31:

22 Անդ, էջ 8:

23 Անդ, էջ 41:

նում: Գրականությամբ զբաղվող մարդկանց գրավում է երիտասարդ գրողի պարմելաոճը, լեզուն, բոլորովին փառերովող գրողական ձեռագիրը: Իսկ, ահա, իշխանությունների՝ Նայասարանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի ուշադրությանն ակնարկն «արժանանում է» բովանդակությամբ՝ ակնհայտ հակասոցիալիստական դիրքորոշումով:

Ակնարկն առաջինը նկարեցին Սուրեն Աղաբաբյանը և Լևոն Նախվերդյանը: Նրանք համակարծիք են՝ «Անիծորը» «թարմաշունչ խոսք» է: «Նրանք Մաթևոսյանն զգում է բնությունը, կենցաղը, ժողովրդական դարձվածաբանությունը, գրում է հնարագետ ու հյութեղ... Նրա առավելությունը կենցաղի ամենահասարակ փաստերի ու երևույթների մեջ նոր պարմության զարկերակն ու շունչը փսնակն է... Նկատում է ոչ թե արտաքինը, այլ հոգեբանականը, և նվաճում այն արվեստի միջոցներով... Պեսք է ողջունել նրա մուրքը գրականության դժվարին ասպարեզում, իսկ ընթերցողներին խորհուրդ փայլ՝ կարդալու «Անիծորը»՝ Մաթևոսյանի անսղծունի ու վստահ քայլը»,- նկատում են քննադատները համալրելով գրված «Թարմաշունչ խոսք» վերնագրով գրախոսականում, («Գրական թերթ», 1961թ. մայիսի 21):

20 փարի անց կրկին Մաթևոսյանի արձակված նվիրված հոդվածում Լևոն Նախվերդյանը շարքի դիպուկ բնորոշում է. «Մենք ամեն ինչով ճիշդ դուրս եկանք, բացի վերջին փողերից: «Անիծորը» աղմուկ հանեց և այն էլ ինչ աղմուկ: Ինչպես ասում են՝ ամպրոպ պարզ երկնքում»²⁴:

1961 թվականի հունիսի 30-ին փետի ունեցավ Նայասարանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի նիստ, որտեղ նշվեց, որ «Սովետական գրականություն» ամսագիրը «թույլ է փվել քաղաքական կոպիտ սխալ»՝ փայագրելով «ոմն Նրանք Մաթևոսյանի «Անիծոր» ակնարկը»: «Նեղիմակն աղավաղում է իրականությունը, խեղաթուրում է Խորհրդային ժողովուրդների գործերն ու աշխարհները»: Մեղադրանքները ներկայացնելուց հետո կեսը ևս կեսը նշվեցին Կենտկոմի որոշումները.

1. «Սովետական գրականություն» ամսագրի գլխավոր խմբագիր Վազգեն Մնացականյանին ազարել աշխարհներից «քաղաքականապես սխալ», «արարավոր» ակնարկը փայագրելու համար:

2. «Գրական թերթի» խմբագիր Մկրտիչ Սարգսյանին հայտարարել նկատողություն «արարավոր ակնարկի մասին փառաբանող գրախոսություն փայագրելու համար»:

3. Նանձնարարել Նայասարանի Գրողների Միությանը բարձրացնել փայագրվող օրգանների մակարդակը և «այն նպատակամղել կոմունիստական կուսակցության» շահերին: Աջալուրջ հետևել երիտասարդ գրողների դաստիարակությանը:

4. Նանձնարարել ՆԽՍՀ Գիտությունների ակադեմիայի գրականության և արվեստի ինստիտուտին քննարկել «քաղաքականապես սխալ ակնարկը»:

5. Նանձնարարել «Սովետական Նայասարան» թերթին քննադատական հոդված փայագրել «Սովետական գրականություն» ամսագրի մասին:

6. Սույն որոշումը քննարկել հանրապետության բոլոր թերթերի, ամսագրերի հրատարակչությունների, ռադիոյի և հեռուստատեսության խմբագրություններում:

24 Լ. Նախվերդյան, «Ինչ»-ն ու «ինչպես»-ը, «Սովետական գրականություն», 1983թ. էջ 8:

1961 թ. «Գրական թերթում» տպագրվում է «Նկարագրություններ «Գրական թերթի» և «Սովետական գրականության» խմբագրություններին»: Մեղադրական խոսք էր ասվում Մաթևոսյանի հասցեին, որովհետև նա, «փոխանակ շեշտը դնելու հանրային սեփականության ուժեղացման վրա, հարց է դնում ավելացնել անձնական օգտագործման անասունների գլխաքանակը և ընդլայնել փրամերձ հողամասը»: Մեղադրականներն ուղղված էին «Սովետական գրականության» և «Գրական թերթի» խմբագրություններին, քանի որ «այս թերթությունները չէին լինի», եթե նրանք «խտրապահանջ» լինեին և «ուղղեին սխալները»:

Խիստ քննադատական հոդված տպագրվեց անգամ գրականության հետ կապ չունեցող «Պոնի ֆրոնտում» թերթում:

««Անիծոր» անցյալ վերադառնալու կոչ է»: «Այն ծաղրում է սովետական կարգերը»: «Նեղինակը մեր թերթությունները քննադատել է թշնամական դիրքերից», «սխալի պատճառը հեղինակի փեսայությունն է»²⁵, - հնչում էր ժողովների ժամանակ:

Ի պաշտպանություն՝ նշվում էր, որ Մաթևոսյանը փառանդավոր է և որ նրան կարելի է դաստիարակել: «Մաթևոսյանի շնորքը չի կարող արդարացնել կատարված գաղափարական սխալը»: «Բայց «Անիծորի» հեղինակը անհուսալի չէ», - հայտարարեց Հր. Քոչարը:

«Մեղադրյալներ»՝ «Սովետական գրականության» գլխավոր խմբագիր Վազգեն Մուրադյանը, քննադատներ Սուրեն Աղաբաբյանը և Լևոն Նախկերդյանն ընդունեցին իրենց «մեղքը», խոստացան նման «քաղաքական» և իրենց համար ճակատագրական սխալ այլևս թույլ չտալ: Արձակի բաժնի վարիչ Արաջաջյանն իրեն արդարացնելու նպատակով մեղադրեց արձակագիր Վ. Խուչումյանին «Անիծորը» գովելով իր վրա ազդելու համար²⁶:

«Իրենք ազնիվ էին ու մինչև վերջ էլ ազնիվ մնացին, մանավանդ Ս. Աղաբաբյանը՝ հեղափոխում ինձ պաշտպանել փորձելու, նորից ճանապարհ բացելու իր ճիգերով... Իմ սերունդն ինձ պաշտպանում էր: Տղաներ, աղջիկներ էին մոտենում, որպես հերոսի էին մոտենում»²⁷, - պատմականներ անց հիշում է Մաթևոսյանը:

Փաստորեն, «Անիծորի» հետ առնչված ոչ ոք անպարիժ չմնաց: Մաթևոսյանը հեռացվեց Մանկավարժական ինստիտուտի երկրորդ կուրսից, աշխատանքից, բոլոր խմբագրություններին հանձնարարվեց նրանից ոչ մի գործ չտպագրել:

«Գաղափարական ջարդ էր»²⁸, - փարիներ անց շատ դիպուկ ձևակերպեց «մեղադրյալ» խմբագիր Մկրտիչ Մարգարյանը:

Մեկ փարի շարունակ ոչ մի խմբագրություն Մաթևոսյանից ոչ մի գործ չէր տպագրում, և հայրնի չէ, թե ինչպես կդասավորվեր Մաթևոսյան գրողի ճակատագիրը, եթե չլիներ քաղաքական որոշ նկարագրումներ, որոնց շնորհիվ 1962 թվականին «Սովետական Նայասարան» ամսագրում տպագրվեցին նրա երկու փոքրիկ պատմվածքները («Թռուցիկ համբույրներ» և «Նովսեփը վերադարձավ բանակից»): Պարզվեց՝ Մաթևոսյանի գրական վերադարձն ապահովել է արտասահմանում գտնվող մի բարերար: Ամսագիրը արտասահ-

25 «Գրական թերթ», 1961, 16 հունիսի:

26 Ժողովներից արված մեջբերումները քաղված են Նայասարանի Ազգային Արխիվի գրականության ֆոնդից:

27 Ն. Վարդումյան, Զրույցներ Հրանտ Մաթևոսյանի հետ, էջ 22-23:

28 Մկ. Մարգարյան, Ակամա երգիծաբանը, Եր., 1993, էջ 70:

մանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապեր ապահովողն էր, Կապաքանակի մեծագույն մասը արտասահման էր առաքվում: «Նրանքին Կապագրեցին ի ցույց արտասահմանի»²⁹:

Ժամանակը ամենաանաչառ ու ճշմարիտ քննադատն է: Եկավ նաև Նրանքի ժամանակը: Նա դարձավ սիրված ու ճանաչված ամբողջ Միությունում, նրա սրբազանությունները ողջ Միության փարածքում ամենաքննարկվողներն էին, նրա մասին գրախոսություններ էին Կապագրում ամենահայտնի ու ընթերցվող այլալեզու ամսագրերը:

1965 թ. «Լիբերալությունայա Արմենիա» ամսագրում ռուսերեն լեզվով Կապագրվում է «Մենք ենք, մեր սարերը» վիպակը (թարգմ. Անահիտ Բայանդուր): Մինչ փողական մամուլը լռում էր, վիպակի ճակատագրով զբաղվում էր համամիութենական մամուլը: 1967 թ. հրապարակվում է արդեն մեծ ճանաչում վայելող արձակագրի անդրանիկ՝ «Օգոստոս» ժողովածուն, 1978 թ.՝ երկրորդ և երրորդ ժողովածուները՝ «Մեր վագրը» և «Ծառերը»: 1968 թ. «Գարուն» ամսագրում Կապագրվում է «Մեծամոր» էսեն, 1982 թ.՝ «Տերը» և «Անձրևածամակը» («Տաշքենդ») վիպակները:

Մաթևոսյանի սրբազանությունների հիման վրա և նրա սցենարներով նկարահանվել են «Մենք ենք, մեր սարերը» (1969 թ.), «Աշուն արև» (1977 թ.), «Տերը» (1989 թ.) ֆիլմերը: 1966 թ. նա Բակունցի «Միքիալը» վերածել էր կինոսցենարի, որի հիման վրա 1975 թ. նկարահանվեց «Այս կանաչ, կարմիր աշխարհը» ֆիլմը:

Մաթևոսյանը 1991-95 թթ. եղել է Նայասպանի Նահրապետության Գերագույն Խորհրդի պարզամտվոր, 1996-2001 թթ.՝ Նայասպանի Գրողների Միության նախագահ: Արժանացել է ՆԽՍՀ (1983 թ.), ԽՍՀՄ (1984 թ.) պետական մրցանակների, ՆՍ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի: Մահացել է 2002 թ. դեկտեմբերի 18-ին:

Մաթևոսյանը նաև գրականության շար լավ փեսայն էր և գրաքննադատ էր: «Քննադատությունը մեր վերաբերմունքն է գրականությանը»³⁰: «Գրականությունը մարդկության կարոտն է կյանքին:... Գրականությունն աշխարհի ազնվանալու փառապալից ճիգն է: Դա գրականության կոչումն է ի ծնե»³¹: Նրա համոզմամբ ոչ միայն գրականությունը, այլև ողջ կյանքը սկսվում է խոսքով ու խոսքից (« Ի ՄԵԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ»): Ինչպես խոսում, այնպես էլ ապրում ես, ինչպես ապրում, այնպես էլ խոսում ես: Մեր ժողովուրդը չի ունեցել գոյական՝ երկիր, պետականություն, դրա պակասը փորձել է լրացնել ածականներով: Այդպիսին է եղել մեր կյանքը, ուստի այդպիսին է եղել նաև մեր գրականությունը: «Մեր ամբողջ կյանքը ածական է եղել: Մեր ամբողջ գրականությունը ածականների գրականություն է: Մերը գոյականն է լինելու: Մեր ժողովրդին, մեր գրականությանը, մեր գրողներին գոյական է պակսը»³²:

Լավ է, երբ գրողը կարողանում է գրել ճիշտ բառ, և ոչ թե երկար փնտրել-զգրելու արդյունքում էջեր լցնել մոպավոր ու համարյա բառերով: Ըիշտ բառ ճիշտ փնտրում, ճիշտ պահին գրելու դեպքում պարտումն այնքան հանճարեղորեն պարզ է դառնում, խոսքն այն-

29 Տե՛ս «Մաթևոսյանական ընթերցումներ», էջ 24:

30 «Գրքերի աշխարհ», 15.05.1979:

31 Նր. Մաթևոսյան, Մայիսակ թղթի առջև, «Գրական թերթ», 1966, թ. 42:

32 «Ար», 01.03.1995:

բան հսկայական, որ յուրաքանչյուր ընթերցողի թվում է, թե ինքն էլ է այդպես մտածում, ինքն էլ կարող է այդպես գրել: Սրբազանգործական արարումը՝ բառ գրելու, կերպար, պատկեր կերպելու ընթացքը, փանջալից աշխատանք է: «Այս սիրելի-սարսափելի, խելացի-խելագար, հասկանալի-խճճված աշխարհում դաժան բան է մերկ լինել, լինել աշխարհի մերկացած նյարդը՝ գրող: Սպիտակ թղթի առջև ամեն վայրկյան կարելի է կաթվածահար լինել»³³:

Ինքնարարահայրման, սեփական Եսի արարածման, ինքդ դեպի քեզ գնալու, քեզ բացահայտելու ամենաբարդ և միևնույն ժամանակ երանելի ընթացք է դա: -Բջերին է հաջողվում մոտենալ իրենք իրենց, ճանաչել, բացահայտել իրենց մեջ եւ՝ այն, ինչը միայն իրենցն է, եւ՝ այն ինչը բոլորինն է: Շարք ավելի քիչ են նրանք, ովքեր կարողանում են ինքնարարահայրվել ու դրանով արարահայրել բոլորին, արարածել սեփական Եսը և դրանով արարածել բոլորի Եսերը: «Եւ ուրեմն ինչ գեղեցիկ են նրանք, ովքեր մարդու համար գրում են ի՞ր խոսքը, մարդու մեջ բացում են ի՞ր լույսը, արձակում ի՞ր ձգվումը»³⁴:

«Եթե կարդում եք ու ասում՝ սա իմ մասին չէ, այլ՝ հարեւանիս,- գրականության իսկականությունը ձեռակերպում է Մաթևոսյանը,- նշանակում է գործի ճշմարտությունը մոտավոր է»:

Երբ գրողն անկեղծ է, երբ չի վախենում բացել ինքն իրեն նախ իր, ապա ընթերցողի, սպիտակ թղթի առջև, այսինքն՝ երբ սրբազանգործությունը ապրված զգացողության արարածումն է, ապա նրա մեջ յուրաքանչյուր ընթերցող կարող է գտնել ինքն իրեն:

...Աշխարհումս ճշմարտությունը չի հեղափոխվում,

ճշմարտությունն ապրվում է լոկ³⁵:

Նրանք Մաթևոսյանի սրբազանգործությունն ապրված ճշմարտության գրականություն է:

Իր կյանքի վերջին 20 տարիների ընթացքում Մաթևոսյանը ոչ մի գործ չգրագրեց, թեպետ բազմաթիվ հարցազրույցներում խոստանում էր ավարտել «Տախը» վեպը. «Վեպը տագնապս ևս հպարտությունս է... 700 էջ կա...»³⁶: Սակայն այն այդպես էլ չգրագրվեց: «Որ անկեղծ լինեմ՝ գրիչը ձերբիցս ընկել է: Գլխավոր պատճառը այն ծառուղում նստած, իմ գիրքը ծնկներին դրած կարդացող աղջկա բացակայությունն է: Գուցե նա կա, բայց ես նրան կորցրել եմ...»³⁷:

33 Նր. Մաթևոսյան, Սպիտակ թղթի առջև, «Գրական թերթ»:

34 Նր. Մաթևոսյան, Սպիտակ թղթի առջև, Եր., 2004, էջ 23:

35 Պ. Մեռաթ, Եղիցի լույս, Եր., 1992, էջ 126:

36 Նր. Մաթևոսյան, «Ծնակույրը ես եմ», Գրական թերթ, 23.11.1984:

37 «Օրագիր», 26.12.1998: